ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵՎ ԹԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

2019 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ դասարաններում անցկացված

ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԵՐԵՎԱՆ 2019

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 2

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 4

1.1. Ամփոփ տեղեկություններ 2019 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման վերաբերյալ 4

1.2. Թեստերի կառուցվածքը և սանդղակավորումը 4

2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 5

2.1. Արտաքին ընթացիկ գնահատման ընդհանուր արդյունքներն ըստ առարկաների 5

2.2. Գնահատականների խմբերի տոկոսային թվերն ըստ առարկաների 7

3. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ 7

4. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ 9

4.1. Ընդհանուր արդյունքներն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների 9

4.2. Արտաքին ընթացիկ գնահատման գնահատականների խմբերի տոկոսային թվերն ըստ առարկաների և ՀՀ վարչատարածքային միավորների 9

5. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ 11

6. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ 12

7. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՄԵՌԵՐԻ 13

ԱՄՓՈՓՈՒՄ 15

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 17

Հավելված 1. Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքներն ըստ տարածաշրջանների 17

Հավելված 2. Արտաքին ընթացիկ գնահատման լավագույն արդյունքներով հանրակրթական ուսումնական հաստատություններն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Գնահատման և թեստավորման կենտրոնի կողմից Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի մի շարք ուսումնական հաստատություններում պարբերաբար անցկացվում է արտաքին ընթացիկ գնահատում: Այդ նպատակով 2019 թվականի հոկտեմբերի 7-ից մինչև դեկտեմբերի 6-ն ընկած ժամանակահատվածում ընտրված ուսումնական հաստատությունների 9-րդ դասարաններում «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաներից անցկացվել է արտաքին ընթացիկ գնահատում, որը հնարավորություն է ընձեռել արձանագրելու այդ հաստատություններում սովորողների ընթացիկ առաջադիմությունը: Միաժամանակ, սովորողերը ծանոթացել են կենտրոնացված ավարտական քննության անցկացման ձևաչափին, վարժվել են տրված ժամանակահատվածում առաջադրանքները ժամանակին կատարելու, պատասխանները ձևաթղթում լրացնելու, սխալների ուղղում կատարելու տեխնիկական առանձնահատկություններին:

Արտաքին գնահատումն անցկացնելու համար կազմվել են թեստեր նախորդ տարիներին աշակերտների ուսումնասիրած թեմաներից:

Ընտրանքը

Արտաքին ընթացիկ գնահատման ընտրանքը կազմել են ՀՀ մարզերում և Երևան քաղաքում գործող 234 հանրակրթական ուսումնական հաստատությունների 9-րդ դասարանի 7366 աշակերտները:

Ընտրանքում ընդգրկված ուսումնական հաստատությունների ցանկում եղել են 113 միջնակարգ դպրոց, 110 հիմնական դպրոց, 3 կրթահամալիր, 1 ավագ դպրոց, 1 վարժարան, 1 հատուկ դպրոց, 1 միջնակարգ մասնագիտական և 4 ոչ պետական ուսումնական հաստատություն:

Դիագրամ 1-ում ներկայացված է ընտրված հանրակրթական ուսումնական հաստատությունների տոկոսային բաշխումն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների:

Դիագրամ 1



Արտաքին ընթացիկ գնահատման կազմակերպումն ու իրականացումը

Արտաքին ընթացիկ գնահատման գործընթացն ընդգրկել է 9-րդ դասարանում սովորող աշակերտների թեստավորումը «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաներից, որին զուգընթաց այդ աշակերտների, ինչպես նաև նրանց հայոց լեզու և մաթեմատիկա դասավանդող ուսուցիչների շրջանում անցկացվել են հարցումներ:

Արտաքին ընթացիկ գնահատումը կազմակերպվել և իրականացվել է Գնահատման և թեստավորման կենտրոնի (ԳԹԿ) աշխատակիցների կողմից, որոնք ուղղորդել և վերահսկել են գնահատման ողջ գործընթացը, ապահովել աշակերտների ինքնուրույն աշխատանքը:

Գրավոր աշխատանքների տևողությունը եղել է 60 րոպե: Յուրաքանչյուր առարկայի գնահատման համար կազմվել և օգտագործվել է թեստերի 8 տարբերակ:

Լրացված թեստերը և պատասխանների ձևաթղթերը տեղափոխվել են ԳԹԿ, որտեղ թեստերի ընդարձակ պատասխանով առաջադրանքները ստուգվել և գնահատվել են առարկայական մասնագետների կողմից, այնուհետև պատասխանների ձևաթղթերը ստուգվել և գնահատվել են համակարգչային եղանակով:

Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքները փոխանցվել են համապատասխան ուսումնական հաստատություններին դասամատյաններում գրանցելու համար:

Արտաքին ընթացիկ գնահատման գնահատականներին զուգահեռ ստեղծվել է նաև ներքին գնահատականների տվյալների բազա՝ աշակերտների 8-րդ դասարանի տարեկան գնահատականների հիման վրա:

Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների վերլուծությունը

Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների վերլուծության մեջ միավորները ներկայացված են համաձայն առարկայական մասնագետների մշակած սանդղակների:

Վերլուծությունն իրականացվել է SQL, SPSS, IATA, Excel ծրագրային փաթեթների կիրառմամբ:

Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքների և հարցաթերթերի վերլուծությունն իրականացվել է մի քանի ուղղություններով.

- ընդհանուր, որտեղ ներկայացվել են արտաքին ընթացիկ գնահատման ընդհանուր արդյունքները,
- առարկայական, որտեղ ներկայացվել է թեստերի և թեստային առաջադրանքների վերլուծությունն ըստ որակական բնութագրիչների և թեստերում ընդգրկված բաժինների. այն տրամադրվել է առարկայական մասնագետներին,
- երկրորդային վերլուծություն, որտեղ ներկայացվել են արտաքին ընթացիկ գնահատման ընթացքում անցկացված հարցման արդյունքները, դրանց կապը սովորողների առաջադիմության հետ և առաջադիմության վրա ազդող գործոնները:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1. Ամփոփ տեղեկություններ 2019 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման վերաբերյալ

Աղյուսակ 1-ում ներկայացված է աշակերտների մասնակցությունը 2019 թվականի հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին անցկացված արտաքին ընթացիկ գնահատմանը:

Աղյուսակ 1

Առարկան	Հայտագրված-ների թիվը	Մասնակից-ների թիվը	Հեռացված-ների թիվը	Բացակաների		Անբավարար գնահատական ստացածների	
				թիվը	տոկոսը	թիվը	տոկոսը
Հայոց լեզու	7366	6825	0	541	7.34	1440	21.1
Հանրահաշիվ		6784	4	578	7.85	1703	25.1

1.2. Թեստերի կառուցվածքը և սանդղակավորումը

Արտաքին ընթացիկ գնահատման թեստերում առաջադրանքների քանակն ըստ առարկաների եղել է տարբեր: Հայոց լեզվի թեստերը կազմվել են 18 առաջադրանքից, հանրահաշվինը՝ 24: Երկու առարկաների թեստերի կառուցվածքն ըստ առաջադրանքների տիպերի ներկայացված է աղյուսակ 2-ում:

Բոլոր թեստերում ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքները գնահատվել են 0 կամ 1 միավորով:

Հայոց լեզվի թեստերում վերջին՝ 18-րդ առաջադրանքը եղել է ընդարձակ պատասխանով, որի գնահատման համար թեստի առավելագույն՝ 21 միավորից նախատեսվել է 0-4 միավոր, հանրահաշվի թեստերում՝ 24-րդ առաջադրանքը (25 միավորից՝ 0-2 միավոր):

Աղյուսակ 2

Առարկան	Առաջադրանքների քանակը			Առավելագույն միավորը
	ընտրովի	կարճ	ընդարձակ	
Հայոց լեզու	10	7	1	21
Հանրահաշիվ	17	6	1	25

Նախնական միավորներից գնահատման 10 միավորանոց համակարգին անցումը կատարվել է համաձայն ստորև բերված սանդղակների (աղյուսակ 3 և դիագրամ 2):

Աղյուսակ 3

Հայոց լեզու		Հանրահաշիվ	
Նախնական միավորը (0-21)	Գնահատականը (1-10)	Նախնական միավորը (0-25)	Գնահատականը (1-10)
0-1	1	0-1	1
2-3	2	2-3	2
4-5	3	4-5	3
6-8	4	6-9	4
9-10	5	10-12	5
11-13	6	13-15	6
14-15	7	16-18	7
16-17	8	19-22	8
18-20	9	23-24	9
21	10	25	10

Դիագրամ 2



2. ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2.1. Արտաքին ընթացիկ գնահատման ընդհանուր արդյունքներն ըստ առարկաների

Ստորև ներկայացված են «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաների միավորների բաշխման հիստոգրամները, որոնցում երանգավորմամբ տարբերակված են «անբավարար» և «դրական» միավորները:

Հիստոգրամ 1



Հիստոգրամ 2



Վերը ներկայացված հիստոգրամներում տեսնում ենք, որ երկու առարկայի դեպքում էլ գերակշռել է 4 միավորը:

Միավորների բաշխման բնութագրիչները

Աղյուսակ 4

Առարկան	Մասնակից-ների թիվը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը[1]	Ստանդարտ շեղումը (ցրվածությունը)[2]	Հուսալի-ությունը[3]
Հայոց լեզու	6825	4.74	0.020	1.629	0.764
Հանրահաշիվ	6784	4.41	0.019	1.542	0.808

[1]Միավորների գնահատման ստանդարտ սխալը համարվում է նորմային մոտ, եթե գործակիցը չի գերազանցում սանդղակի միավոր քայլը:
[2]10 միավորանոց սանդղակում միավորների բաշխումը համարվում է լավ, եթե ստանդարտ շեղումը մեծ է 1,5-ից:
[3] Հուսալիության գործակցի՝ 0.7-ից մինչև 0.8 ընդունած արժեքների դեպքում թեստի հուսալիությունը համարվում է միջին, 0.8-ից մինչև 0.9 արժեքների դեպքում՝ ընդունելի, 0.9-ից մեծ արժեքների դեպքում՝ մեծ:

Արձանագրված միջին միավորները ցածր են 1-10 գնահատականների սանդղակի՝ տեսականորեն ընդունված միջին միավորից (5.5-ից): Գնահատման ստանդարտ սխալները և ստանդարտ շեղումները նորմայի սահմաններում են: Հայոց լեզվի թեստերի հուսալիությունը միջին է, հանրահաշվինը՝ ընդունելի:

2.2. Գնահատականների խմբերի տոկոսային թվերն ըստ առարկաների

Գնահատման 10 միավորանոց սանդղակում արտաքին ընթացիկ գնահատման գնահատականների խմբերի տոկոսային բաշխումը ներկայացված է դիագրամ 3-ում:

Ինչպես երևում է դիագրամից, ամենացածր տոկոսային թվեր են ունեցել 9 և 10 («գերազանց») գնահատականները (առավելագույնը՝ 1.4%): Երկու առարկայի դեպքում էլ գերակշռել են 4 և 5 («բավարար») գնահատականները (հայոց լեզվից՝ 45.5%, մաթեմատիկայից՝ 53%): 21.1-25.1% են կազմել 1-3 («անբավարար») գնահատականները: Ընդհանուր առմամբ, արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցները հայոց լեզվից ցուցաբերել են ավելի լավ արդյունքներ, քան հանրահաշվից:

Դիագրամ 3



3. ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Արտաքին և ներքին գնահատումների գնահատականները միմյանց հետ համեմատելիս կարևոր է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ներքին գնահատման 10 միավորանոց համակարգը արհեստականորեն կրճատվել է, և ամենացածր գնահատականը դարձել է 4-ը (սանդղակի միջին միավորը՝ 7,0), մինչդեռ արտաքին գնահատման դեպքում կիրառվել են 1-ից 10 գնահատականները (սանդղակի միջին միավորը՝ 5,5): Թեև ներքին գնահատման նպատակով կիրառվող գործիքակազմն ավելի բազմազան է՝ ի տարբերություն արտաքին գնահատման, սակայն ներքին գնահատման մեջ մեծ է սուբյեկտիվության գործոնը:

Աղյուսակ 5-ից հետևում է, որ ներքին և արտաքին գնահատումների միջին միավորների տարբերությունը հայոց լեզվից եղել է 1.79 միավոր, հանրահաշվից՝ 1.76:

Հետևյալ հիստոգրամներում ներկայացված են 2019 թվականին անցկացված արտաքին ընթացիկ գնահատման գնահատականների և ներքին գնահատման՝ տարեկան գնահատականների բաշխման համադրությունները «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաներից:

Աղյուսակ 5

Առարկան	Գնահատումը	Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը (ցրվածությունը)
Հայոց լեզու	Արտաքին	4.74	0.020	1.629
	Ներքին	6.53	0.023	1.893
Հանրահաշիվ	Արտաքին	4.41	0.019	1.542
	Ներքին	6.17	0.023	1.873

Հիստոգրամ 3

Հայոց լեզու



Հիստոգրամ 4

Հանրահաշիվ



Հիստոգրամներում տեսնում ենք, որ արտաքին գնահատման գնահատականներում գերակշռել են՝ հայոց լեզվից՝ 4-6, հանրահաշվից՝ 4 և 5 գնահատականները: Ներքին գնահատման գնահատականները հայոց լեզվից ունեցել են գրեթե միանման բաշխում 4-9 միջակայքում՝ 7-9 գնահատականների քանակական ոչ մեծ առավելությամբ: Հանրահաշվի դեպքում ներքին գնահատման գնահատականներից առավել մեծաքանակ են եղել 4-ը և 5-ը, ավելի պակաս՝ 9-ը:

4. ԱՐՏԱՔԻՆ ԸՆԹԱՑԻԿ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ

4.1. Ընդհանուր արդյունքներն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած աշակերտների թվերը և միջին միավորներն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների: Մուգ երանգով են նշված համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից մեծ կամ հավասար միջին միավորների վանդակները:

Աղյուսակ 6

Վարչատա-ածքային միավորը	Հայոց լեզու			Հանրահաշիվ		
	Մասնակիցների		Միջին միավորը	Մասնակիցների		Միջին միավորը
	թիվը	տոկոսը		թիվը	տոկոսը	
Երևան	2139	31.3	5.10	2119	31.2	4.80
Արագածոտն	421	6.2	4.58	405	6.0	4.18
Արարատ	479	7.0	4.33	493	7.3	3.78
Արմավիր	492	7.2	4.63	492	7.3	4.34
Գեղարքունիք	548	8.0	4.33	565	8.3	4.01
Լոռի	445	6.5	4.55	463	6.8	4.22
Կոտայք	491	7.3	4.71	484	7.1	4.22
Շիրակ	507	7.4	4.60	479	7.1	4.14
Սյունիք	470	6.9	4.93	455	6.7	4.72
Վայոց ձոր	303	4.4	4.26	302	4.5	4.36
Տավուշ	530	7.8	4.70	527	7.8	4.41
Ընդամենը	6825	100	4.74	6784	100	4.41

Դիտարկելով աղյուսակում բերված տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ երկու առարկաներից էլ լավագույն արդյունքներով աչքի են ընկել Երևանի և Սյունիքի մարզերի աշակերտները, իսկ Տավուշի մարզում հայոց լեզվի միջին միավորը մոտ է եղել ընդհանուր միջին միավորին, հանրահաշվինը՝ հավասար:

4.2. Արտաքին ընթացիկ գնահատման գնահատականների խմբերի տոկոսային թվերն ըստ առարկաների և ՀՀ վարչատարածքային միավորների

Աղյուսակ 7-ում ներկայացված են արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած աշակերտների տոկոսային թվերն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների և գնահատականների խմբերի: Բաց երանգով նշված են գնահատականների յուրաքանչյուր խմբում արձանագրված ամենացածր տոկոսների վանդակները, մուգ երանգով՝ ամենաբարձրերինը:

Աղյուսակ 7

Վարչա-տարածքային միավորը	Գնահատականները							
	1-3		4-5		6-8		9-10	
	Հայոց լեզու	Հանրա-հաշիվ	Հայոց լեզու	Հանրա-հաշիվ	Հայոց լեզու	Հանրա-հաշիվ	Հայոց լեզու	Հանրա-հաշիվ
Երևան	12.4	17.5	46.6	52.0	39.1	29.3	1.9	1.2
Արագածոտն	23.7	27.9	47.5	56.8	27.6	15.3	1.2	
Արարատ	33.0	40.2	40.5	49.7	26.1	10.1	0.4	
Արմավիր	24.0	27.9	46.8	52.2	27.0	19.3	2.2	0.6
Գեղարքունիք	30.7	34.2	44.5	52.2	24.1	13.4	0.7	0.2
Լոռի	21.8	27.4	52.4	56.6	24.9	16.0	0.9	
Կոտայք	22.8	29.3	42.8	53.7	32.2	17.0	2.2	
Շիրակ	23.3	29.7	46.9	53.0	27.2	16.9	2.6	0.4
Սյունիք	17.7	20.7	41.9	48.8	40.4	28.8		1.7
Վայոց ձոր	33.0	23.5	43.6	58.3	23.1	16.9	0.3	1.3
Տավուշ	22.6	22.0	42.6	55.4	34.0	22.2	0.8	0.4

Աղյուսակում տեսնում ենք, որ ՀՀ վարչատարածքային միավորների կտրվածքով հայոց լեզվից 1-3 (անբավարար) գնահատականներ ստացած աշակերտների ամենացածր տոկոսային թիվն արձանագրվել է Երևանում (12.4%), 4 և 5 գնահատականներինը՝ Արարատի մարզում (40.5%), 6-8-ինը՝ Վայոց ձորի մարզում (23.1%): 9 և 10 գնահատականներ չեն արձանագրվել Սյունիքի մարզում:

Հանրահաշվից 1-3 գնահատականներ ստացած աշակերտների ամենացածր տոկոսային թիվը նույնպես արձանագրվել է Երևանում (17.5%), 4 և 5 գնահատականներինը՝ Սյունիքի մարզում (48.8%), 6-8-ինը՝ Արարատի մարզում (10.1%): 9 և 10 գնահատականներ չեն արձանագրվել Արագածոտնի, Արարատի, Լոռու և Կոտայքի մարզերում:

Գնահատականների 1-3 (անբավարար) միջակայքում հայոց լեզվից արձանագրված ամենաբարձր տոկոսը եղել է Գեղարքունիքի մարզում (30.7%), 4-5 միջակայքում՝ Լոռու մարզում (52.4%), 6-8 միջակայքում՝ Սյունիքի մարզում (40.4%): 9 և 10 գնահատականներ ստացած աշակերտների տոկոսն ամենաբարձրն է եղել Շիրակի մարզում (2.6%):

Գնահատականների 1-3 (անբավարար) միջակայքում հանրահաշվից արձանագրված ամենաբարձր տոկոսային թիվը եղել է Արարատի մարզում (40.2%), 4-5 միջակայքում՝ Վայոց ձորի մարզում (58.3%), 6-8 միջակայքում՝ Երևանում (29.3%): 9 և 10 գնահատականներ ստացած աշակերտների տոկոսն ամենաբարձրը եղել է Սյունիքի մարզում (1.7%):

Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքներն ըստ տարածաշրջանների մանրամասն ներկայացված են հավելված 1-ում:

5. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են երկու առարկաներից ընդհանուր արդյունքներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի: Մուգ երանգով են նշված համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից մեծ կամ հավասար միջին միավորների վանդակները:

Աղյուսակ 8

Ուսումնական հաստատությունը	Հայոց լեզու			Հանրահաշիվ		
	Մասնակիցների		Միջին միավորը	Մասնակիցների		Միջին միավորը
	թիվը	տոկոսը		թիվը	տոկոսը	
Հիմնական դպրոց	4722	69.2	4.87	4651	68.6	4.52
Միջնակարգ դպրոց	1865	27.3	4.28	1896	27.9	3.99
Ոչ պետական ուսումնական հաստատություն	69	1.0	6.51	69	1.0	5.97
Ավագ դպրոց	59	0.9	6.36	59	0.9	7.00
Կրթահամալիր	51	0.7	4.53	50	0.7	4.88
Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություն	41	0.6	5.02	41	0.6	3.93
Վարժարան	11	0.2	5.73	11	0.2	5.09
Հատուկ դպրոց	7	0.1	4.14	7	0.1	3.86

Վերլուծությունից պարզվել է, որ ընտրանքի գերակշիռ մասը կազմած հիմնական դպրոցների աշակերտների միջին միավորները եղել են համապատասխան ընդհանուր միջին միավորներից մոտ 0.1 միավորով բարձր:

Հայոց լեզվի ընդհանուր միջին միավորից բարձր են եղել հիմնական և ավագ դպրոցների, վարժարանի, ոչ պետական և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների միջին միավորները (1.13-1.77 միավորով), հանրահաշվից՝ հիմնական և ավագ դպրոցների, ոչ պետական ուսումնական հաստատությունների, կրթահամալիրների և վարժարանի միջինները (0.11-2.59 միավորով):

Երկու առարկայից էլ ամենաբարձր արդյունքներն են ցուցաբերել ավագ դպրոցի և ոչ պետական ուսումնական հաստատությունների աշակերտները, որոնք կազմել են մասնակիցների ընդհանուր թվի մոտ երկու տոկոսը: Նշանակալիորեն ցածր արդյունքներ են ցուցաբերել միջնակարգ դպրոցների աշակերտները: Ամենացածր արդյունքներն ունեցել են հատուկ դպրոցի աշակերտները:

Ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի միջին միավորներն ավելի տեսանելի ներկայացված են դիագրամ 5-ում, որտեղ տեսնում ենք, որ

գրեթե բոլոր տիպերի հաստատություններում «Հայոց լեզու» առարկայից արձանագրվել են ավելի բարձր արդյունքներ, քան հանրահաշվից: Ավագ դպրոցում և կրթահամալիրներում եղել է հակառակ պատկերը: Ընտրանքի գերակշիռ մասը կազմած հիմնական դպրոցներում հայոց լեզվի միջին միավորը եղել է 4.87-ը, հանրահաշվինը՝ 4.52-ը: Միջնակարգ դպրոցներում երկու առարկայից էլ միջին միավորը մոտ կես միավորով ցածր է եղել ընդհանուր միջինից:

Դիագրամ 5

Միջին միավորներն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի



Լավագույն արդյունքներով հանրակրթական ուսումնական հաստատություններն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների ներկայացված են հավելված 2-ում:

6. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԻՊԵՐԻ

Աղյուսակ 9-ում ներկայացված են վիճակագրական տվյալներ ըստ ՀՀ բնակավայրերի տիպերի: Գունավորած են համապատասխան առարկայի ընդհանուր միջին միավորից բարձր միջին միավորների վանդակները:

Աղյուսակ 9

Բնակավայրի տիպը	Հայոց լեզու			Հանրահաշիվ		
	Մասնակիցների		Միջին միավորը	Մասնակիցների		Միջին միավորը
	թիվը	տոկոսը		թիվը	տոկոսը	
Խոշոր քաղաքներ	2460	36.0	5.06	2414	35.6	4.75
Միջին քաղաքներ	1210	17.7	4.90	1181	17.4	4.47
Փոքր քաղաքներ	1368	20.0	4.65	1361	20.1	4.35
Գյուղեր	1303	19.1	4.28	1327	19.6	3.95
Սահմանամերձ գյուղեր	259	3.8	4.24	274	4.0	4.12
Բարձր լեռնային գյուղեր	215	3.2	4.14	212	3.1	3.89
Բարձր լեռնային սահմանամերձ գյուղեր	10	0.2	3.30	15	0.2	2.93

Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքներն ըստ բնակավայրի տիպի ավելի ակնառու ներկայացված են դիագրամ 7-ում:

Դիագրամ 7



Բնակավայրի տիպի համարը	1	2	3	4	5	6	7	1	2	3	4	5	6	7
Մասնակիցների տոկոսային թիվը	36.04	17.73	20.04	19.09	3.8	3.15	0.15	35.58	17.42	20.06	19.55	4.04	3.13	0.22
Միջին միավորը	5.06	4.9	4.65	4.28	4.24	4.14	3.3	4.75	4.47	4.35	3.95	4.12	3.89	2.93

Դիագրամից երևում է, որ ինչպես նախորդ տարիներին, 2019 թ. նույնպես քաղաքային բնակավայրերի աշակերտների արդյունքները եղել են ավելի բարձր, քան գյուղական բնակավայրերի աշակերտներինը, ընդ որում, նրանց միջին միավորները, մասնակիցների թվով պայմանավորված, նշանակալիորեն տարբերվել են հատկապես սահմանամերձ, բարձր լեռնային և բարձր լեռնային սահմանամերձ գյուղերի աշակերտների միջին միավորներից:

7. ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ՍԵՌԵՐԻ

Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած աշակերտների 48.1 %-ը եղել են աղջիկներ, 51.9 %-ը՝ տղաներ: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են երկու առարկաներից վիճակագրական տվյալներ՝ ըստ մասնակիցների սեռի:

Աղյուսակ 10

Առարկան	Սեռը	Մասնակիցների		Միջին միավորը	Գնահատման ստանդարտ սխալը	Ստանդարտ շեղումը
		թիվը	տոկոսը			
Հայոց լեզու	աղջիկ	3344	49.0	5.11	0.028	1.626
	տղա	3481	51.0	4.38	0.026	1.552
Հանրահաշիվ	աղջիկ	3348	49.4	4.49	0.027	1.540
	տղա	3436	50.6	4.33	0.026	1.541

Համեմատելով աղյուսակում զետեղված տվյալները՝ տեսնում ենք, որ երկու առարկայից էլ աղջիկների միջին միավորները բարձր են տղաների, ինչպես նաև համապատասխան ընդհանուր միջին միավորներից: «Հայոց լեզու» առարկայից աղջիկների և տղաների հավաքած միջին միավորների տարբերությունը կազմել է 0.73, հանրահաշվից՝ 0.16:

Հայոց լեզվից «անբավարար» գնահատական ստացած և մասնակիցների 21.1 տոկոսը կազմած աշակերտների 7.3 տոկոսը եղել են աղջիկները, 13.8 տոկոսը՝ տղաները: Հանրահաշվից «անբավարար» գնահատական ստացածների ընդհանուր տոկոսը կազմել է 25.1, որից 11.5-ը եղել են աղջիկները, 13.6-ը՝ տղաները:

Հայոց լեզվից «գերազանց» գնահատական է ստացել մասնակիցների 1.4 տոկոսը (աղջիկներ՝ 1.1%, տղաներ՝ 0.3%), հանրահաշվից՝ 0.7 տոկոսը (աղջիկներ՝ 0.4%, տղաներ՝ 0.3%):

Ստորև բերված հիստոգրամներում ըստ առարկաների ներկայացված է տղաների և աղջիկների միավորների բաշխվածությունը:

Հիստոգրամ 5

Հայոց լեզու



Հիստոգրամ 6

Հանրահաշիվ



Երկու առարկայից «անբավարար» գնահատական ստացածների թվում գերակշռել են տղաները (հայոց լեզվից՝ 13.8%, հանրահաշվից՝ 13.6%):

Հայոց լեզվից «անբավարար» գնահատական ստացած աղջիկները կազմել են մասնակիցների թվի 7.3%-ը, հանրահաշվից՝ 11.5%-ը:

«Գերազանց» գնահատական ստացած աղջիկների տոկոսային թիվն ամենամեծը եղել է հայոց լեզվի դեպքում: Ի դեպ, հայոց լեզվից աղջիկները 10 գնահատական չեն ստացել: «Գերազանց» գնահատական ստացած տղաները հայոց լեզվից ստացել են և՛ 9, և՛ 10 գնահատականներ: Հանրահաշվից «գերազանց» գնահատական ստացած տղաները ստացել են միայն 9 գնահատականներ:

ԱՄՓՈՓՈՒՄ

2019-20 ուսումնական տարվա առաջին կիսամյակում Հայաստանի Հանրապետության մարզերի և Երևան քաղաքի 234 հանրակրթական ուսումնական հաստատություններում «Հայոց լեզու» և «Հանրահաշիվ» առարկաներից անցկացվել է արտաքին ընթացիկ գնահատում: Գնահատման նպատակն է եղել 9-րդ դասարանի աշակերտների գիտելիքների ստուգումը: Հայտագրված 7366 աշակերտների 7.3-7.8 տոկոսը չի մասնակցել գրավոր աշխատանքին:

- **Միավորների բաշխման բնութագրիչները**

Արտաքին ընթացիկ գնահատմանը մասնակցած աշակերտները հայոց լեզվից ցուցաբերել են ավելի բարձր արդյունքներ, քան հանրահաշվից: Միջին միավորը հայոց լեզվից եղել է 4.74-ը, հանրահաշվից՝ 4.41-ը: Երկու առարկայի դեպքում էլ գերակշռել է 4 միավորը: Մասնակիցների 21.1 տոկոսը հայոց լեզվից, 25.1 տոկոսը հանրահաշվից ստացել է «անբավարար» (1-3) գնահատական: «Գերազանց» (9 և 10) գնահատականների ամենամեծ տոկոսն արձանագրվել է հայոց լեզվից (1.4%):

- **Արտաքին և ներքին գնահատումների համեմատությունը**

Արտաքին գնահատման միավորները ցածր են եղել ներքին գնահատման միավորներից. միջին միավորների տարբերությունը հայոց լեզվից կազմել է 1.79, հանրահաշվից՝ 1.76: «Հայոց լեզու» առարկայի արտաքին գնահատման արդյունքներում գերակշռել են 4-6 գնահատականները, «Հանրահաշիվ» առարկայից՝ 4-ը և 5-ը, ներքին գնահատման դեպքում, համապատասխանաբար, 7-9 և 4-5 գնահատականները:

- **Ընդհանուր արդյունքներն ըստ վարչատարածքային միավորների**

Երկու առարկայից էլ լավագույն արդյունքներով աչքի են ընկել Երևանի և Սյունիքի մարզի, հանրահաշվից՝ նաև Տավուշի մարզի աշակերտները:

Հայոց լեզվից «անբավարար» (1-3) գնահատականների ամենաբարձր տոկոսային թիվն արձանագրվել է Գեղարքունիքի մարզում (30.7%): 4 և 5 գնահատականների միջակայքում առաջատարը եղել է Լոռու մարզը (52.4%), 6-8 միջակայքում՝ Սյունիքի մարզը (40.4%): «Գերազանց» (9 և 10) գնահատականների տոկոսային թիվն ամենաբարձրն է եղել Շիրակի մարզում (2.6%):

Հանրահաշվից «անբավարար» (1-3) գնահատականների տոկոսային թվով առաջատարը եղել է Արարատի մարզը (40.2%), 4 և 5 գնահատականներով՝ Վայոց ձորի

մարզը (58.3%), 6-8-ով՝ Երևանը (29.3%), «գերազանց» (9 և 10) գնահատականներով Սյունիքի մարզը (1.7%):

- **Վերլուծություն ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների տիպերի**

Արտաքին ընթացիկ գնահատման ցանկում ընդգրկված հանրակրթական ուսումնական հաստատությունների գրեթե բոլոր տիպերում «Հայոց լեզու» առարկայից արձանագրվել են ավելի բարձր արդյունքներ, քան հանրահաշվից: Հակառակ պատկերն է դիտարկվել ավագ դպրոցում և կրթահամալիրներում:

Հայոց լեզվից և հանրահաշվից ամենալավ արդյունքները ցուցաբերել են ոչ պետական ուսումնական հաստատությունների, ավագ և հիմնական դպրոցների ու վարժարանի աշակերտները, որոնք կազմել են մասնակիցների ընդհանուր թվի 70.1 տոկոսը: Նշանակալիորեն ցածր արդյունքներ են ցուցաբերել միջնակարգ դպրոցների աշակերտները. երկու առարկայից էլ միջին միավորը մոտ կես միավորով ցածր է եղել համապատասխան ընդհանուր միջինից:

Ընտրանքի գերակշիռ մասը կազմած հիմնական դպրոցներում հայոց լեզվի միջին միավորը եղել է 4.87-ը, հանրահաշվինը՝ 4.52-ը:

- **Աշակերտների պատրաստվածությունն ըստ բնակավայրերի տիպերի**

Վերլուծությունից հետևում է, որ քաղաքային բնակավայրերի աշակերտների արդյունքներն ավելի բարձր են եղել, քան գյուղական բնակավայրերինը: Տարբերությունը մեծ է եղել հատկապես սահմանամերձ, բարձր լեռնային և բարձր լեռնային սահմանամերձ գյուղերի դեպքում:

- **Վերլուծություն ըստ սեռերի**

Արտաքին ընթացիկ գնահատման մասնակիցների 49 տոկոսը կազմած աղջիկների միջին միավորները երկու առարկաներից էլ բարձր են եղել 51 տոկոսը կազմած տղաների միջին միավորներից և համապատասխան ընդհանուր միջին միավորներից:

Երկու առարկաներից էլ աղջիկները միջին միավորներով գերազանցել են տղաներին: Հայոց լեզվից աղջիկների և տղաների հավաքած միջին միավորների տարբերությունը կազմել է 0.73, հանրահաշվից՝ 0.16:

Հայոց լեզվից «անբավարար» գնահատական է ստացել մասնակիցների 21.1 տոկոսը (աղջիկներ՝ 7.3%, տղաներ՝ 13.8%), հանրահաշվից՝ 25.1 տոկոսը (աղջիկներ՝ 11.5%, տղաներ՝ 13.6%): Երկու առարկայից էլ «անբավարար» գնահատական են ստացել առավելապես տղաները (հայոց լեզվից՝ 13.8%, հանրահաշվից՝ 13.6%): «Անբավարար» գնահատական ստացած աղջիկները հայոց լեզվի դեպքում կազմել են մասնակիցների թվի 7.3%-ը, հանրահաշվի դեպքում՝ 11.5%-ը:

Հայոց լեզվից «գերազանց» գնահատական է ստացել մասնակիցների 1.4 տոկոսը (աղջիկներ՝ 1.1%, տղաներ՝ 0.3%), հանրահաշվից՝ 0.7 տոկոսը (աղջիկներ՝ 0.4%, տղաներ՝ 0.3%): Ընդ որում, աղջիկները հայոց լեզվից ստացել են միայն 9 գնահատական: Տղաները հայոց լեզվից ստացել են և՛ 9, և՛ 10, իսկ հանրահաշվից՝ միայն 9 գնահատական:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Արտաքին ընթացիկ գնահատման արդյունքներն ըստ տարածաշրջանների

Վարչատա-րածքային միավորը	Տարածաշրջանը	Հայոց լեզու		Հանրահաշիվ	
		Մասնակիցների			
		թիվը	միջին միավորը	թիվը	միջին միավորը
Երևան	Աջափնյակ (Դավթաշեն)	231	4.90	232	4.62
	Ավան	205	5.01	199	4.71
	Արաբկիր	247	5.36	250	4.62
	Էրեբունի (Նուբարաշեն)	292	4.74	283	4.88
	Կենտրոն, Նորք-Մարաշ	293	5.06	292	4.67
	Մալաթիա-Սեբաստիա	208	5.14	212	4.82
	Նոր Նորք	239	5.18	240	4.95
	Շենգավիթ	212	5.32	201	4.74
	Քանաքեռ-Զեյթուն	212	5.31	210	5.28
Ընդամենը		**2139**	**5.1**	**2119**	**4.8**
Արագածոտն	Աշտարակ	152	4.87	147	4.29
	Ապարան	94	4.44	91	4.33
	Արագած	59	4.27	54	4.22
	Թալին	116	4.47	113	3.88
Ընդամենը		**421**	**4.58**	**405**	**4.18**
Արարատ	Արարատ (Վեդի)	239	4.37	247	3.63
	Արտաշատ	131	4.31	134	3.93
	Մասիս	109	4.27	112	3.93
Ընդամենը		**479**	**4.33**	**493**	**3.78**
Արմավիր	Արմավիր	259	4.67	265	4.49
	Բաղրամյան	9	3.89	9	3.22
	Վաղարշապատ	224	4.62	218	4.19
Ընդամենը		**492**	**4.63**	**492**	**4.34**
Գեղարքունիք	Գավառ	115	4.59	114	4.42
	Ճամբարակ	47	3.87	51	3.86
	Մարտունի	149	3.98	149	3.77
	Սևան	131	4.85	131	4.35
	Վարդենիս	106	4.09	120	3.63

Ընդամենը		**548**	**4.33**	**565**	**4.01**
Լոռի	Ալավերդի	133	4.53	142	4.31
	Սպիտակ	91	4.40	94	3.96
	Ստեփանավան	35	3.80	37	3.84
	Վանաձոր	126	4.62	127	4.19
	Տաշիր	60	5.15	63	4.68
Ընդամենը		**445**	**4.55**	**463**	**4.22**
Կոտայք	Աբովյան	152	4.07	150	4.15
	Հրազդան	204	5.19	197	4.11
	Նաիրի	135	4.73	137	4.46
Ընդամենը		**491**	**4.71**	**484**	**4.22**
Շիրակ	Աշոցք (Ամասիա)	19	4.37	20	3.70
	Արթիկ	143	4.34	142	4.01
	Գյումրի (Ախուրյան)	282	4.63	255	4.24
	Մարալիկ (Անի)	63	5.16	62	4.19
Ընդամենը		**507**	**4.6**	**479**	**4.14**
Սյունիք	Գորիս	113	4.93	104	4.77
	Կապան	194	4.94	190	5.09
	Սիսիան	163	4.92	161	4.25
Ընդամենը		**470**	**4.93**	**455**	**4.72**
Վայոց ձոր	Եղեգնաձոր	165	4.33	162	4.66
	Վայք (Ջերմուկ)	138	4.18	140	4.01
Ընդամենը		**303**	**4.26**	**302**	**4.36**
Տավուշ	Բերդ	120	4.96	114	4.50
	Դիլիջան	151	4.82	151	4.32
	Իջևան	140	4.64	139	4.23
	Նոյեմբերյան	119	4.37	123	4.64
Ընդամենը		**530**	**4.70**	**527**	**4.41**

Հավելված 2. Արտաքին ընթացիկ գնահատման լավագույն արդյունքներով հանրակրթական ուսումնական հաստատություններն ըստ ՀՀ վարչատարածքային միավորների

Երևան

Առարկան	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Մասնակիցների	
		թիվը	միջին միավորը
Հայոց լեզու	«Երևակ» կրթահամալիր	12	6.58
	«Հայ-չինական բարեկամության դպրոց» հիմնադրամ	59	6.36
	Թիվ 143 հիմնական դպրոց	37	6.22
	«Վամհեր» ՍՊԸ «Տաթև» միջնակարգ դպրոց	10	6.10
	Թիվ 38 հիմնական դպրոց	56	5.80
	«Շ. Շահամիրյան» վարժարան	11	5.73
	Թիվ 56 հիմնական դպրոց	98	5.68
	Թիվ 4 հիմնական դպրոց	45	5.67
	Թիվ 137 հիմնական դպրոց	97	5.65
	«Օհանյանի վարժարան» ՍՊԸ	20	5.55
Հանրահաշիվ	«Հայ-չինական բարեկամության դպրոց» հիմնադրամ	59	7.00
	«Երևակ» կրթահամալիր	13	6.38
	«Վամհեր» ՍՊԸ «Տաթև» միջնակարգ դպրոց	10	6.10
	Թիվ 4 հիմնական դպրոց	43	5.86
	«Օհանյանի վարժարան» ՍՊԸ	19	5.74
	Թիվ 38 հիմնական դպրոց	53	5.70
	Թիվ 60 հիմնական դպրոց	53	5.55
	Թիվ 50 հիմնական դպրոց	23	5.48
	Թիվ 143 հիմնական դպրոց	40	5.40
	Թիվ 150 հիմնական դպրոց	90	5.33

Արագածոտն

Առարկան	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Մասնակիցների	
		թիվը	միջին միավորը
Հայոց լեզու	Օհանավանի միջնակարգ դպրոց	32	5.16
	Նորաշենի միջնակարգ դպրոց	14	5.07
	Արտենիի միջնակարգ դպրոց	20	5.05
	Բազմաղբյուրի միջնակարգ դպրոց	12	5.00
	Ծաղկաշենի միջնակարգ դպրոց	10	4.90
Հանրահաշիվ	Ծաղկահովիտի միջնակարգ դպրոց	16	5.06
	Վարդենուտի միջնակարգ դպրոց	10	4.70
	Ապարանի թիվ 1 հիմնական դպրոց	24	4.67
	Աշտարակի հիմնական դպրոց	67	4.49
	Ռյա-Թազայի միջնակարգ դպրոց	11	4.45

Արարատ

Առարկան	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Մասնակիցների	
		թիվը	միջին միավորը
Հայոց լեզու	Արարատի թիվ 3 հիմնական դպրոց	35	5.89
	Արտաշատի թիվ 3 հիմնական դպրոց	31	5.26
	Մասիսի թիվ 3 հիմնական դպրոց	40	4.73
	Դարբնիկի միջնակարգ դպրոց	11	4.55
	Վեդու թիվ 2 հիմնական դպրոց	71	4.54
Հանրահաշիվ	Արարատի թիվ 3 հիմնական դպրոց	38	4.61
	Մասիսի թիվ 6 հիմնական դպրոց	17	4.00
	Ազատավանի միջնակարգ դպրոց	34	4.00
	Արաքսավանի միջնակարգ դպրոց	9	4.00
	Բաղրամյանի միջնակարգ դպրոց	32	3.97

Արմավիր

Առարկան	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Մասնակիցների	
		թիվը	միջին միավորը
Հայոց լեզու	«Էօրնեկեան» միջնակարգ դպրոց	27	7.56
	Տանձուտի միջնակարգ դպրոց	14	5.21
	Արաքսի միջնակարգ դպրոց	12	5.08
	Արմավիրի թիվ 2 հիմնական դպրոց	76	5.07
	Վաղարշապատի թիվ 3 հիմնական դպրոց	33	5.03
Հանրահաշիվ	«Էօրնեկեան» միջնակարգ դպրոց	27	6.22
	Նորապատի միջնակարգ դպրոց	27	5.33
	Արտիմետի միջնակարգ դպրոց	16	5.13
	Ջանֆիդայի միջնակարգ դպրոց	21	4.95
	Արմավիրի թիվ 2 հիմնական դպրոց	76	4.88

Գեղարքունիք

Առարկան	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Մասնակիցների	
		թիվը	միջին միավորը
Հայոց լեզու	Սևանի թիվ 5 միջնակարգ դպրոց	5	5.80
	Գավառի թիվ 4 հիմնական դպրոց	42	5.38
	Վարդենիսի թիվ 4 հիմնական դպրոց	11	5.18
	Գեղհովիտի թիվ 1 միջնակարգ դպրոց	30	5.17
	Շողակաթի միջնակարգ դպրոց	6	5.00
Հանրահաշիվ	Գավառի թիվ 4 հիմնական դպրոց	40	5.15
	Գեղհովիտի թիվ 1 միջնակարգ դպրոց	30	4.63
	Դդմաշենի միջնակարգ դպրոց	21	4.57
	Գեղամավանի միջնակարգ դպրոց	17	4.53
	Թթուջրի միջնակարգ դպրոց	13	4.46

Լոռի

Առարկան	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Մասնակիցների	
		թիվը	միջին միավորը
Հայոց լեզու	Տաշիրի թիվ 2 հիմնական դպրոց	48	5.52
	Ալավերդու թիվ 2 հիմնական դպրոց	24	5.21
	Լեռնավանի միջնակարգ դպրոց	6	5.00
	Ալավերդու թիվ 4 հիմնական դպրոց	14	4.93
	Վանաձորի թիվ 22 հիմնական դպրոց	23	4.87
Հանրահաշիվ	Ալավերդու թիվ 4 հիմնական դպրոց	14	5.07
	Ալավերդու թիվ 2 հիմնական դպրոց	27	5.04
	Տաշիրի թիվ 2 հիմնական դպրոց	51	4.98
	Վանաձորի թիվ 12 հիմնական դպրոց	10	4.80
	Օձունի թիվ 2 միջնակարգ դպրոց	23	4.78

Կոտայք

Առարկան	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Մասնակիցների	
		թիվը	միջին միավորը
Հայոց լեզու	Հրազդանի թիվ 11 հիմնական դպրոց	120	5.46
	Կամարիսի միջնակարգ դպրոց	27	5.26
	Հրազդանի թիվ 14 հիմնական դպրոց	35	5.26
	Քանաքեռավանի միջնակարգ դպրոց	32	5.22
	Նոր Արտամետի միջնակարգ դպրոց	14	4.86
Հանրահաշիվ	Նոր Գեղիի թիվ 2 միջնակարգ դպրոց	17	4.76
	Եղվարդի թիվ 3 հիմնական դպրոց	75	4.49
	Հրազդանի թիվ 14 հիմնական դպրոց	34	4.41
	Արամուսի միջնակարգ դպրոց	37	4.41
	Ակունքի միջնակարգ դպրոց	23	4.39

Շիրակ

Առարկան	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Մասնակիցների	
		թիվը	միջին միավորը
Հայոց լեզու	Ձորակապի միջնակարգ դպրոց	22	6.23
	Արթիկի թիվ 6 հիմնական դպրոց	14	5.71
	Գյումրու թիվ 6 հիմնականդպրոց	50	5.38
	Բանդիվանի միջնակարգ դպրոց	8	5.00
	Գյումրու թիվ 31 հիմնական դպրոց	35	4.91
Հանրահաշիվ	Արթիկի թիվ 6 հիմնական դպրոց	15	5.67
	Գյումրու թիվ 31 հիմնական դպրոց	30	4.80
	Գյումրու թիվ 11 հիմնական դպրոց	72	4.58
	Ձորակապի միջնակարգ դպրոց	24	4.46
	Հառիճի միջնակարգ դպրոց	9	4.33

Սյունիք

Առարկան	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Մասնակիցների	
		թիվը	միջին միավորը
Հայոց լեզու	Գորիսի թիվ 5 հիմնական դպրոց	20	5.60
	Գորիսի թիվ 6 հիմնական դպրոց	47	5.55
	Կապանի թիվ 7 հիմնական դպրոց	59	5.53
	Կապանի թիվ 6 հիմնական դպրոց	47	5.40
	Սիսիանի թիվ 5 հիմնական դպրոց	45	5.40
Հանրահաշիվ	Գորիսի թիվ 6 հիմնական դպրոց	36	5.75
	Գորիսի թիվ 5 հիմնական դպրոց	20	5.65
	Կապանի թիվ 7 հիմնական դպրոց	60	5.55
	Կապանի թիվ 6 հիմնական դպրոց	47	5.45
	Սիսիանի թիվ 5 հիմնական դպրոց	44	4.91

Վայոց ձոր

Առարկան	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Մասնակիցների	
		թիվը	միջին միավորը
Հայոց լեզու	Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոց	7	5.43
	Վերնաշենի միջնակարգ դպրոց	8	5.13
	Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց	49	4.82
	Վայքի թիվ 2 հիմնական դպրոց	61	4.59
	Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց	52	4.27
Հանրահաշիվ	Ջերմուկի թիվ 1 հիմնական դպրոց	7	6.57
	Վերնաշենի միջնակարգ դպրոց	8	5.63
	Եղեգնաձորի թիվ 2 հիմնական դպրոց	49	5.06
	Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց	47	4.77
	Գլաձորի միջնակարգ դպրոց	11	4.45

Տավուշ

Առարկան	Հանրակրթական ուսումնական հաստատությունը	Մասնակիցների	
		թիվը	միջին միավորը
Հայոց լեզու	Բերդի թիվ 3 հիմնական դպրոց	38	5.71
	Իջևանի թիվ 4 հիմնական դպրոց	39	5.46
	Դիլիջանի թիվ 2 հիմնական դպրոց	75	5.32
	Բաղանիսի միջնակարգ դպրոց	7	5.29
	Վերին Կարմիրաղբյուրի միջնակարգ դպրոց	13	5.08
Հանրահաշիվ	Վերին Կարմիրաղբյուրի միջնակարգ դպրոց	13	5.38
	Ոսկևանի միջնակարգ դպրոց	10	5.30
	Բերդի թիվ 3 հիմնական դպրոց	36	5.17
	Բագրատաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց	19	5.00
	Նոյեմբերյանի թիվ 2 հիմնական դպրոց	51	4.98